

ԱՐԱՅ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Օրը

Օրից

Մայրենի Հրատարակչատուն
Ուոլթոն 2000

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԲԵՒ ՄՈՒՏՔ

ՕՐԸ ՕՐԻՆ

1979

ՄէշՄէՏճԻԿ, ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԾԱԽՈՒ ՉԷ՝ 1

1981

ԱՆՅԱՅՏ ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐ 4
«Թէ՛ն՝ ԳԻԿԻՆ ԲԱՐԵՒ ԸՐԷ...» 7
«ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍԻ ՆԷ՛ ԽՆԴԱԼԷՆ ԿԸ ՃԱԹԻՔ...» 8
«ԽԵԼՔԴ ԳՈՐԾԱԾԷ...» 9
ԱՐԴԱՐ ՉԱՅՐՈՅԹ 11
ՊԱՐՈՆԵԱՆԻՆ ԱՆԱՐԺԱՆ «ՋՈՋ-ԲԱՐԵՐԱՐ» ՄԸ 12
«ԻՆԾԻ ՉԻ՛ ԿՐՆԱՐ ՊԱՏԱՀԻԼ...» 13
ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԽԵԼՕՔ ՉԱԼՕՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ 15
«ՆԱԽ ԱՆՈՒՆԴ ՊԷՏՔ Է ՏԱՄ...» 16
«Չ» 18
ՄԻ ԵՐԿՈՒ ԽՈՍԿ ...20
ԿՂՁԻՆ 21
«ԱՐԴԱՐԱՍԷՐ» ԹՈՒՐՔ ՄԸ 23
ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ, ՀԱՐԱՋԱՏՆԵՐ 24

1982

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏՈՂ ՊԱՊ ՄԸ 25
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ 27

1983

ՈՉ-ՏՕՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ 31
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿ 33
ԱՋԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ 35
77 ՍԵՆԹ 37
ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ 39
ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱԿԱՍ 43
«ՀԱՅԵՐԸ ՄԵՌԱԾ ԵՆ ԱՐԴԷՆ...» 45
ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ 47
ԳԱԼ ՏԱՐՈՒԱՆ ԻՆՉ ԵՂԵՐ Է 49
ԴԱՍ ՄԸ ՄԵՋԻ, ԴԱՍ ՄԸ ԱՆՈՆՅ 51
ՉԷՋՈ՞Ք ԹԷ ԱՆԿԱԽ 53
ԱՂՔԱՏՆԵՐԸ 55
ՎԵՑ ՀԱՐԻԻՐ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՀԵՐ 57
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԿՐԿՆՈՒԻ 59
ՀԵՐՈՍ ՄԸ 61
«ՀԱՅ ԸԼԼԱԼՈՒՄ ԱՄՉՅԱՅ» 63
ՄԱՀՈՒԱՆ ՄԷՋ ԿԵԱՆՔ 65

Երկու ծանուցումներ	68
Քաղաքապետության հարը	71
Վերադարձված երկու ՊԻՏԻ ՏԱՆ ՄԵՌԱԾՆԵՐՈՒՆ	74
Լեւոն	77
Գեորգիան ՄԷՋ - ԱճՊԱՐԱՐԸ	79

1984

ՄԵՌԵԼՈՑ	81
ՎՏԱՆԳԱՒՈՐ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ԳԱՐՉՆԵՐ	84
ԳԵՏՆՈՒՂԻՒՆ ՄԷՋ	87
ԽԱՉՈՎ ԵՒ ԱԻՏԱՐԱՆՈՎ	89
ԱՆՕԹԻ ԵՄ	91
ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐ	93
ՀԱՆԴԷՍ ՄԸ	95
ՍԻՐՏԻ ՄԸ ԹԱՂՈՒՄԸ	97
ՊԱՏԿԵՐՆԵՐ ՓԱՐԻՋԻ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐՈՒ ՄՆԱՅՈՒՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԵՐԷՆ	99
134,000 ՏՈԼԱՐ...	103
ՄԵՐՆ Է	105
«ՊԱՏՄԱԿԱՆ ԹՈՒԿԱՆ ՄԸ»	107
ՏԻԳՐԱՆ ԹԱԳԱՒՈՐ ՊԱՐՏՈՒՅՑԱԻ	109
ԵՐԿՈՒ ՀԱՅ	111
«ՊԱՐՈՆ, ԱՅԴ ԴՈՒՔ ԷՔ...»	114
ԱՇԽԱՐՀ ՆՈՐ ՎՏԱՆԳԻ ՄԸ ԱՌՁԵՒ	117
«ՄԻ ՀԱՒԱՏԱՐ...»	119
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ	121
ԲՕՔԷՐԻ ՍԵՂԱՆԻՆ ՇՈՒՐՋ	123

1985

ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՅԱՆՑԱՒՈՐ ԵՆ	126
ՄԱՐԴԱՍՊԱՆ ԲԱՈԸ	128
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՎՏԱՀՈՒԹԻՒՆԸ ՉԱՐԱՉԱՐ ԳՈՐԾԱԾՈՒԿ Է	130
ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ	133
ՀՐԱՇՔԻ ՍԿՍԱՅ ՀԱՒԱՏԱԼ	135
ՄՈԿԱՅ ՄԻՐՁԷՆ ՈՒՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ	137
ԱՌԱՒ-ՉՓԱԽԱՒՆԵՐԸ	139
ԼԵՋՈՒ ԵՒ ՎՐԷԺ	142
ՄՇԵՑԻ ՄԱՅՐԻԿԸ	144
«ՉԷ՞ ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ԱՋԱՏԷՆՔ...»	147
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ	150
ՀՈՎԻՆ ՊԷՏՔ Է ՏԱԼ	153
ԹՂԹԱԽԱՂ	155
ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԿՈՒՄԸ	157
ԱՄԱՌՆԱՅԻՆ ՋԲՕՍԱՆՔ	159
ՀԱՅԸ	161
ՊԵԹՀՈՎԸՆ ԵՒ ՀԱԻԵՐԸ	164
ՀԱՅՈՑ ՏՈՒՆԸ	166
ՀԱՅԵՐԷՆԸ ՇՈՒԿԱՅԻՆ ՄԷՋ	168
ՎԵՐԱՄՈՒՏ	171
ԲԱՅ ԱՉՔՈՎ ԵՐԱՋԱՆՔ	173

Թերթ ԿԸ ԾԱԽԵՄ	175
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՕԳՆՈՂՆԵՐԸ	178
ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ	181
ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ ՄԸ	185
ԱՅԼԱՄԵՐԺ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ	188

1986

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՐԴ	191
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒԺԸ	193
ՀԱՅ ԱՆԱՐԺԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԸ	195
ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ՀԱՅ ՄԸ	198
ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	201
ՄԱՏՂԱԸ ԾԱՌ	203
ԺԱՄԱՆԱԿԸ ԱՄԷՆ ԲԱՆ ԿԸ ՄՈՌՑՆԷ	205
ՄԵԼԳՈՆԵԱՆ	207
«ԼԻԲԱՆԱՆԸ ՉՄՈՌՆԱՔ...»	211
«ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»	214
ԵՐԴՈՒՄ ՄԸ	216
ՉԱՐՉԱՐՈՒԿԸ	218
ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ	221
ԵՐԿԻՑՄ ՓՐԿՈՒԿԸ	224
«ՁԱՅՆ ՄԸ ՀՆՉԵՑ»	227
ԿԱՐՕՏ	230

1987

ՄԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ	232
ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ	234
«ՄԵՆՔ ԱՐԴԷՆ ՈՐՔ ԵՆՔ»	236
ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ ՄԸ	238

1988

ՆԱԽԻՋԵՒԱՆԸ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԸ	240
ՑԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	243
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿԸ	245
ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ	249
ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏՆԵՐԸ	253
ՀԱՅՐԵՆԱՇԻՆՈՒԹԻՒՆ	257
ՍՈՒՄԿԱՅԻԹ	260
ԱՐԱՐԱ - 70 - ՄՈՌՑՈՒԿԸ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ	263
ՍՐՏԻ ԽՕՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՄ	265
ՅԱՆՈՒՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ	268
ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ	273
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼԸ	276

1989

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՂԷՏԷՆ ԵՏՔ	
ԴԺՈՒՔԻՆ ՄԷՁ	279
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՆՅԵՏԱՉԳԵԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	284
ՊԷՏՔ Է ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆԵԼ ԳԻՂԵՐԸ	288

Արցախը եւ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԻ ՄԸ ԵՏՔ	291
Ներքին Սփինոզ	295
ՀԱՅ ԼԵՁՈՒՆ ՊԳՆԱԺԱՄԻ ՄԷ՞Ձ	299
ԱՐՏԱԳԱՂԹԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ	304
ՀԱՒԱՏԱՔՆՆԻՉԸ ԱՐԹՈՒՆ Է	309
ԵՐԿՈՒ ՄԱՏՂԱՇ ԿԵԱՆՔ	312
ԱՆԺԱՄԱՆԱԿ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ ԷՋՄԻԱՇՆԻ ՄԷՁ	314
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ	317
ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԸ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԸ	319
Ո՞ՒՐ ԵՆ ԱՆՈՆՔ	322

1990

Ինքնազոհ զինուորականներ	324
Ինչո՞ւ է Անհրաժեշտ է ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ	328
ՆՈՐ ԱՂԷ՞Տ ՄԸ	331
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԿՈՒՆԴԻ ԵՋՐԻՆ	334
ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՏԱՄԱՀՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ	338
ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ	341
ՀԱՄԼԷԴՆԵՐՈՒ ԵՒ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ	344
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍԱՆ	347
ԵՐԲ ԱՌԻԹԸ ԿԸ ՓԱԽՅՆԵՆՔ	351
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ	355
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ	359
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ MINEUR-Ի ՈՒ MAJEUR-Ի ՀԱՐՑ ՄԸ	363
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, 1918 ԵՒ 1990	366
ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՄԵՐ ԱՊԱԿԱՆ Է	370
ԿԵՆՍԱՏՈՒ ԱՂԲԻՐԸ	372
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ ՄԱՍԻՆ	374
ԴԻԱԿԱՊՈՒՏՆԵՐԸ	376
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ	379
ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ	383

1991

Խի՞ղճի Խնդիր	386
Անհատն Մնացած ՈճիՐԻ ՄԸ ՏԱՐԵԼԻՑԸ	388
ՄԱՐԿԿԱՅԻՆ ՈՃՐԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ	391
ԿՐՆԱՆՔ ՀԱՒԱՏԱԼ	394
ՔԻՒՐՏԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ	398
ՄԱՐԿԿԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ	400
ԿՈՐՈՒՄՏ ՄԸ ԵՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁ ՄԸ	403
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹ ՄԸ	406
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ	409
ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ	413
ՈՉ ՍՏՐՈՒԿՆԵՐՈՒ ՆՈՐՕՐԵԱՅ ՎԱՃԱՌՔԻՆ	416
ԿՐԾՈՂ ՔԱՂՑԿԵՂԸ	419
ԸՆԿՐԿՈՒՄ ՄԸ	422
ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏԱՄՈՔՍԻ ՑԱՒ	424
ՀԱՅԵԼԻՆ ՍԽԱԼ Է, ԹԷ...	426
ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐՕՐԵԱՅ ՀՆԳԱԲԱՆԵԱՆ	431

1992

ՋԱՐԳԱՐԱՐ ՀԱՅԸ	434
«Տէ՛ր, Կեցո՛ւ Գո՛ւ ՁՀԱՅՍ...»	437
ՎՐԻՊԱԾ ԳՐԱՒԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎՈՅՆ	440
ԱԶԳԱՅԻՆ ՈՒԽՏ	445
ԱՆՏՈՒՆԻ	449
ԱՆՏՈՒՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ	451
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԳԱՆՁԵՐՈՒՆ ՄԱԹՄԱՆԵՆԳՈՒԹԻՒՆԸ	454
ՊՈՒՐՔԻՆԱ ՖԱՍՈՅԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՄԻՆ ԷՐ	457
Ո՞ՒՐ Է ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ	459

1993

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԳՈՎ ԾԵՐՈՒՆԻՆ	462
«ՊԱՅՔԱՐ» ՇԱԲԱԹԱԾԵՐԹԸ ՓԱԿՈՒԱԾ Է	464
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ	467

1998

ՀԱՅՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ	476
ԺԱՄԱՆԱԿՆ Է ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՍՐԲԱՑՄԱՆ	479
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ	484

1999

ՄԵՆՔ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐՈՒՆ ՊԷՏՔ ՉՈՒՆԻՆՔ	487
Ո՞Վ ՏԻՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԸՆԷ	490
ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ ՄԸ ՔԻՒՐՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ	492
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	495
ՓՈՇԻ ԱԶԳ	498
ԱԶԱՏ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹ - Ո՞ՒՐ Է ԱՆ	501

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՆՔ

ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ՄԻՒՆԱԿԸ	505
ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՆՔ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ	507
«Ո՞Վ Է ՊԱՏԱՄԽԱՆ ՏԱԼՈՒ»	510
ԳԼԱՉՈՐԻ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ	513
ԱՂԷՏԻ ՄԸ ԱՀԱԶԱՆԳԸ	515
«ՎԻՃԱԿԸ ՊԱՐՋԱՊԷՍ ԱՂԷՏԱԼԻ Է...»	518
ՏԱՐՕՐԻՆԱԿ ՅՕԳՈՒԱԾԻ ՄԸ ԱՌԻԹՈՎ	521
ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	527
Ի՞ՆՉ ԿԸ ՄՏԱԾԷ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՏՆՕՐԷՆԸ	533
«ՊԱՐՋՈՒՆԱԿ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ...», «...ՀԻՄԱ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄՈՌԱՅԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ...», «ՉԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ, ՉԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ»	536
«ՏՂԱՔ, ԼԱՒԸ ՓՆՏՈՒՅԷՔ...»	541

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԹՈՒՐՔԵՐԸ	545
ԹՐՔԱՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ	547
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՉԵԱԼ ԿՐԱԿԻ ՏԱԿ	549
ԵՈՒՐԻ ԱՆՏՐՈՓՈՎ	551
ԵՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ	552

«ՎԱՍՆ ԿՐՕՆԻ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ» 554
 ՄԱՐԳԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ 555
 ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 557
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱՋ 558
 69-ԷՆ ԱՆԴԻՆ 560
 ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄՈՌԱՅԿՈ՞Տ Է, ԹԷ... 563
 ԽԱՌՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՂԷՏԸ 565
 ՍԹԷՅԹ ՏԻՔԱՐԹՄԸՆԹԻՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ 566
 ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՏՕՆԵՐԷՆ ԵՏՔ 569
 ՅԻՇԵՆՔ ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԳԱՊԵՏԸ 571
 ՏԵՈՒՐ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ 572
 ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԸ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 575
 «ՀԻՄԱ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ» ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԸՆԳՈՒՆԵԼԻ Է 578
 ԵԿԵՂԵՑԻԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ 580
 ՅԱԶՈՂ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ ՄԸ 582
 ԱՀԱԲԵԿԿՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԸ 585
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ 587
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԺՆՈՒՄԸ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 590
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ 592
 ԵԿԵՂԵՑԻԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ 594
 ՊԷՅՐՈՒԹԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ 597
 ԵՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ 599
 «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊԷ՞ՏՔ Է ՀԵՏԱՊՆԴԵԼ» 601
 ՅՈՌԵՏԵՍՈՒԹԵԱՆ ՔՕՂԸ 603
 ԽԱՉԱՋԵՒՈՒՄ ՄԸ 606
 ՄԽԻԹԱՐԵԱՆ ԶՈՅԳ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ 608
 ՀԱՅՐ ՄԱՆՈՒԷԼ ԵՐԿԱԹԵԱՆ 610
 ԵՐԲ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԿԸ ԽՕՍԻՆ 611
 ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ 613

ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԳԷՄՔԵՐ

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻԻ 617
 «ՊԱՏՈՒԻՐԵՑԻՆ ՅԱՆՁՆԵԼ ՁԵՋ» 620
 ԽԵՂԱԹԻՐՈՒՄԸ ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ ՄԸ 629
 ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 635
 «ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ» 647
 ԳԱՐՁԵԱԼ ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ 654
 «ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՆԱՄԱԿԱՆԻ» 658
 ԳԵՂԵՑԻԿ ՆՈՒԱՃՈՒՄ ՄԸ 663
 ՏԵՂԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ 666
 ԱՆԱՐԳՈՒՄԸ ՄԱՐԳԻԿ 669
 ՊՕՂՈՍ ԳԷՈՐԳԵԱՆ 671
 ԱՆՆԵՐԵԼԻ ԱՐԱՐՔ ՄԸ 674
 ԵՐՈՒՄԱՂԷՍԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՎԱՌԱՐԱՆԸ 678
 «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» 681
 ՔԱՆԻ՞ ՉԱՓ ԵՒ ՔԱՆԻ՞ ԿՇԻՌ 684
 ԳՐԱԿԱՆ ՀԱՒԱՏԱՔՆԻՉ ՄԸ 688
 ԱՐԸԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ 693
 «ԱՆՆՄԱՆ ՆՄԱՆՈՂԸ» 696

ԱՐՈՒԵՍՏԻ ԳԵՂԵՑԻԿ ՆՈՒԱՃՈՒՄ ՄԸ	700
ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ	704
1982-ի ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՊՐԻԷԼ ԿԱՐՍԻԱ ՄԱՐՔԷՋԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՃԱՌԸ	708
ՎԱՀԱՆ ԹՕՓԱԼԵԱՆ	712
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱՋ	714
«ՄԵՐԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ»	716
ՔՈՒՉԱԿԵԱՆ ՔԱՌԵԱԿՆԵՐՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ	720
ԿԱԹՈՒԱՇԻ ԶՈՀ ՍԻՐՏ ՄԸ	724
ՍՐԲԱԿԵՆՅԱԳ ՄԸ	727
ՀԻՆ ՔԱՂԱՔ ՄԸ ՈՐ Կ'ԱՊՐԻ ԽԱՉՔԱՐԵՐՈՎ	730
ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ	734
ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ	737
ՅԱՆՈՒՆ ԳԱԼԻՔ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ	740
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ԿԸ ՓԱՍՏԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ	744
ՀԱՄԱՅՆՔ ՄԸ ՈՐ Կ'ԱՊՐԻ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՎ	748
«ԷՋԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ»	751
ԱՇԽԱՐՀ ՄԸ ԱՄԲՈՂՋ ԵՐԿՈՒ ԲԱՐԱԿ ՏԵՏՐԵՐՈՒ ՄԷՋ	762
ՎԵՐՋԻՆ ՍՈՀԻԿԱՆԸ	772

Ի Բ Ե Դ Ե Մ Ո Ւ Տ Ք

Ի՛նչ անմեղ ու բարեմիտ էին Մեծ Եղեռնին վերապրողները, որոնք քաշկուտուեցան մէկ տեղէն միւսը՝ յուսալով որ մեզի բարեկամ նկատուած եւրոպական պետութիւններ ոչ միայն պիտի հոգային մեր վաղուան օրը, այլեւ ու մանաւանդ մեզի պիտի տային Մեծ Հայաստան մը, կամ յոռեգոյն պարագային՝ Կիլիկիա մը, ուր տարագիրները կարենային վերադառնալ եւ վերսկսիլ իրենց խորշակահար կեանքը:

Սակայն Մեծ Հայաստանի փոխարէն ունեցանք պզտիկ խրճիթ մը: Համայնավար վարչակարգը սեւ քող մը տարածեց անոր վրայ եւ Սիպերիոյ սառնամանիքները իրենց մահաշունչ ստուերը պտտցուցին անոր գաւակներուն գլխավերեւը:

Իսկ անոնք որոնք Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն մազապուրծ ազատած էին ու տեղաւորուած Հալէպ, Դամասկոս, Պէյրութ, Երուսաղէմ, Գահիրէ եւ այլ հիւրընկալ քաղաքներ, մինչեւ Աթէնք, Փարիզ ու Լոնտոն, ընկերային ու քաղաքական պայմաններու բերումով մէկէ աւելի անգամներ ափ առին գաղթականի ցուպը՝ նոր հորիզոններու տակ վերստին հիմնելու տուն եւ տեղ, իրենց նիստն ու կացը պատշաճեցնելու նոր մշակոյթներու, եւ տակաւ կորսնցնելու ազգային նկարագիրը:

Ո՞վ տէր-տիրական պիտի ըլլայ օտար ափերու վրայ հասակ նետած մեր տղոց եւ աղջիկներուն, եւ անոնցմէ ո՞վ պիտի ամուր կամքը ունենայ պահել-պահպանելու իր լեզուն եւ իր ազգային արժէքները. այսինքն՝ մնալու հա՛յ:

* * *

Այս հատորը առաւելաբար կը ցոլացնէ Ամերիկահայերու կեանքը — նախ՝ անոնց՝ որոնք 1950-ական թուականներէն սկսեալ Ամերիկա հաստատուած էին, ապա անոնց՝ որոնք ալիք առ ալիք հոս ապաստանեցան: Անոնց կեանքը այնքան ալ սահուն չեղաւ Ամերիկայի մէջ: Ոմանք, մասնաւորաբար տարեցները, աւաղեցին իրենց «գժբախտութիւն»ը. ուրիշներ տուայտեցան կարօտովը իրենց նախկին բնակավայրերուն:

Եւ այսպէս, մարդկային ու ազգային ողբերգութիւն մը շղթայեց հայու ցանուցիր բեկորները. հայութիւնը հիւժեցաւ ու արիւնեցաւ կաթիլ առ կաթիլ: Ըստ երեւոյթին՝ կարելի պիտի չըլլայ կասեցնել այս արիւնահոսութիւնը. հայու գաւակները այլեւս գրեթէ չեն խօսիր հայերէն. հետզհետէ կը նահանջէ հայկական երգը. եւ մեր ո՛չ մէկ բանի հետ բաղդատուող սքանչելի պատարագն անգամ Հայ Եկեղեցիին մէջ կը կորսնցնէ իր ոգեղէն նկարագիրը՝ անգլերէնի մակընթացութեան առջեւ:

Եւ այսպէս պիտի շարունակուի սփիւռքի մէջ ամէն տեղ:

* * *

Այս հատորը կը պարունակէ բազմազան նիւթեր, որոնք կ'ընդգրկեն շուրջ երեսուն տարիներու պարունակ մը՝ գրախօսականի, խմբագրականի, ակնարկի, պատկերի թէ յօդուածի տարազներուն տակ, սփռուած Պէյրութի «Նայիրի» շաբաթաթերթին, Պոսթոնի «Պայքար» օրաթերթ-շաբաթաթերթ-ամսագիրին եւ Լոս Անճելըսի «Նոր Օր» եռօրեայ-շաբաթաթերթին մէջ: Բայց անոր գերակշիռ մասը կը կազմեն «Օրը Օրին» ընդհանուր խորագրով գրութիւնները որոնք 1976-էն սկսեալ գրած էի «Պայքար»ի մէջ: Ինծի համար հիանալի պատեհութիւն մըն էր «Օրը Օրին»ը գրել ամէն շաբաթ. նիւթերը շատ էին, որովհետեւ համայնքը եռուզեռի մէջ էր, կեանքը կը խայտար ամէն տեղ, եւ նոյնիսկ կը դժուարանայի բոլոր գրութիւններս մամուլին յանձնելու:

Ընթերցողը հարեւանցի թերթատումով իսկ պիտի նշմարէ զանազանութիւնը նիւթերուն: Այդ զանազանութիւնը, ապա նաեւ հրատապութիւնը շարք մը նիւթերու, զիս կը մղէին լաւագոյնս ընելու՝ նախ ընթերցողներուս համար եւ ապա ինծի: Տպարանէն հագիւ թերթը հասած՝ կը յափշտակէի օրինակ մը ու մանրամասնօրէն կը քննէի զայն՝ վրէպի մը հանդիպելու ակնյայտ վախով...:

«Օրը Օրին»ներով ես ուզեցի յարգանքի տուրք մը վճարելով շարունակել սովորութիւն մը որ հայ գրականութեան մէջ մուծեց Արփիար Արփիարեան: Հայ գրականութեան սքանչելի պատմուածքներ պարգեւած, իր հրապարակագրութեամբ մի քանի սերունդներ դաստիարակած եւ ի վերջոյ հայու ձեռքով սպաննուած այս հիանալի անձն է որ ի՛ր նկարագրով եւ գրական ժառանգութեամբ զիս մղած է դէպի մեր ազգային գիրն ու գրականութիւնը:

Յարգանք իր յիշատակին:

Արայ Գալայճեան

ՄԷՀՄԷՏՃԻԿ, ԳԱԳԻԿ ԹԱԳԱՌՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԾԱԽՈՒ ԶԷ՛

«Պայքար»ի ընթերցողները անշուշտ արդար ընդվզումով կարդացին տեղեկատուութիւնը Աղթամարի Գագիաչէն Սուրբ Խաչ եկեղեցիին մասին: Կը թուի թէ թուրքը պիտի չդադրի պարբերաբար մեզ – եւ ամբողջ մարդկութիւնը – տարօրինակ անակնկալներու առջեւ դնելէ:

Եւ սակայն, առաջին վրդովումէս եւ զայրոյթէս ետք, աւելի ուշադրութեամբ կը սկսիմ կարդալ «Ճումհուրիէթ»ի մէջ Ընթ Գանսուի հրատարակած յօդուածը: Այս մարդը յայտնապէս տարբեր տեսակի «հայրենակից» մըն է, որ այդպէս, օր ցերեկով եւ լայն տարածում ունեցող օրաթերթի մը մէջ կը յայտարարէ թէ Վասպուրականի թագաւորութիւն մը գոյութիւն ունեցած է, թէ պատմութեան մէջ ապրած է Գագիկ հայ թագաւոր մը, որ պատերազմներ մղելէ զատ՝ մտածեր է նաեւ աղօթքի տուն շինելու մասին...: Տարօրինակ բան. թուրք պատմագէտները այս յօդուածագիր Ընթին չա՞փ ալ չեն գիտեր, որ տարիներով իրենց մտքէն իսկ չէ անցած գէթ անցողակի յիշել մեր Գագիկը:

Բայց յօդուածագիրը իրապէ՛ս որոշած է զարմացնել իր ընթերցողները, երբ, արուեստասէր եւ անաչառ մարդ, «պարկեշտօրէն» այլ այնքան պարզօրէն կ'ըսէ՝ «Աղթամար կղզին եւ եկեղեցին, անտեսուած ու լքուած, երկար տարիներ եթէ չըջանի հովիւներուն համար իբրեւ ախոռ գործածուին՝ շատ բնական էր որ հետեւանքը ասիկա պիտի ըլլար»: Եւ ի՞նչ է այդ «հետեւանք»ը. «... մարդոց աւերիչ ձեռքերուն տակ, որմերուն վրայ մեծ խնամքով ու գուրգուրանքով զետեղուած կրօնական քանդակները քակուեր են, սրբուեր, փճացուեր...»:

Խեղճ Ընթ, լուր չունի՞ թէ որոնք են այդ «մարդեր»ը որոնք աւերեր են Սուրբ Խաչ Տաճարը. անուն չունի՞ն, ժողովուրդի մը չե՞ն պատկանիր:

Այդ մարդը, եւ իրեն պէս հարիւրաւոր եւ հազարաւոր եւ հարիւր-հազարաւոր Ընթները ո՞ր էին, երբ իրենց կուռք Քեմալի մէհմէտիստիկները ականներով հողին կը հաւասարեցնէին հայկական եկեղեցիներն ու յուշարձանները. ո՞ր էին երբ տակաւին տաս տարի առաջ արեւելեան նահանգներուն մէջ քանդումէ հրաշքով ազատուած մատուռները կը փճացնէին. ո՞ր էին երբ տակաւին միջնադարի մէջ ապրող իրենց գիւղացիները տուն կը շինէին ջարդուած կամ աքսորուած հայերու եկեղեցիներուն սրբատաշ քարերով եւ հայ գերեզմաններու սուրբ տապանաքարերով:

Պահ մը դառնանք եւ նայինք Աղթամարի չորս բոլորտիքը. Ընթ չէ՞ լսած Վանայ Լիճի գոհարներէն Լիմ եւ Կտուց «անապատ»ներուն մասին, ուր մեղրամոմ դարձած մատներով վարդապետ-ճգնաւորներ Սաղմոս կը քաղէին եւ «մի կում ջրով» սնանելով՝ Մեսրոպի տառերուն հրաշքը կ'արձանացնէին մագաղաթներու վրայ: Այսօր, Լիմը եւ Կտուցը կը գտնուին այդ էջերուն վրայ միայն, եւ տառապող ու հայրենաբաղձ հայութեան մը սրտին մէջ: Այսօր միայն աւերակներու հետքեր կան հոն:

Ո՞ր է Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետը, «մուրատատուր» այդ սրբավայրը. ո՞ր է Առաքելոց վանքը՝ իր սուրբ տապաններով. ո՞ր է Նարեկայ գողտրիկ վանքը, որուն Սուրբը, գերագոյն անէացման մը պահուն, պիտի երկնէր հրաշալի երգը մեղքի եւ փրկութեան, մարմնականին եւ ոգեկանին, անյոյս ճենճերումին եւ յուսատու արշալոյսին, եւ ուր, հոգիին ու երեւակայութեան աչքերովը պիտի տեսնէր սայլիկը որ «ի գիւ գայր ի գիւ, սայլիկն ի գիւ» վանքին հանդիպակաց գեղապանձ սէգ Միփանէն:

Ո՞ր է Վարագը, այն սրբավայրը՝ ուր, երջանիկ գիշեր մը, շառաւիղուեր էր ու երկինքներու անհուններէն իջեր Սուրբ Նշանը, եւ ուր, հարիւր տարի առաջ, մունչեր էր աննման Հայրիկի լուսափիւռ մամուլը:

Ո՞ր է Խառակոնիս գիւղը, որուն պարզով մատուռին շուքին յաւիտենական իր քունով կը հանգչէր սիրոյ եւ պանդխտութեան անմահանուն երգիչ Քուչակը, եւ որուն շիրմին – իբրեւ «մուրատատուր» սրբարանի – կը դիմէր հային հետ նաեւ քիւրտը, հաւատացեալին հետ նաեւ թերահաւատը:

Ո՞ր է, վերջապէս, մեր անհամար մատուռներէն, եկեղեցիներէն ու վանքերէն յետոյ աննման Վանը, ուր հրաշագեղ բնութեան մը մէջ կը ծաղկէր Կեանքը՝ իբրեւ երջանիկ փառատրութիւն ուղղուած Անհունութեան, Տիեզերքին, այսինքն՝ Արարիչին: Այսօր, պատմական Տուչպան, Տոսպը՝ իր հազարաւոր տարիներու կեանքին փոշին գրկած՝ կը քնանայ, եւ ուղեւորին աչքին մեռած ու սառած բացաստան մըն է որ կը տարածուի միայն: Որովհետեւ, դժբախտ օր մը, «այրուեցան այգեստանները»:

Եւ, ո՞ր է Աղթամարը:

Սէգ Սիփանի շուքին, Վանայ գեղատեսիլ ծովուն մէջ, ան տակաւին կը շարունակէ ապրիլ, իբրեւ վերջին այլ շքեղագոյն յուշարար այն փառքին՝ որ Հայունն էր իր հօրենական հողին վրայ, հազարաւոր տարիներ: Կառուցուած 915-921 տարիներուն Գագիկի կողմէ, Սուրբ Խաչ Տաճարը գլուխ-գործոցներէն մին է հայ եկեղեցական ճարտարապետութեան, եւ անմահանուն ճարտարապետին Մանուէլի ձեռակերտը: Հոն է աղօթած, իր առանձնարան-վերնատան մէջ՝ թագաւորը: Հոն եկած են աղօթքներ մըմնջելու թագուհին եւ իշխանուհիները: Հոն է որ գահակալած են Աղթամարի կաթողիկոսները, եւ հոն, եկեղեցիին շուրջ-բոլորը, տապալած սուրբ խաչաքարերու տակ կը հանգչին երախտաշատ կրօնականներ:

Հայուն ճարտարամտութեան շնորհիւ, հազարաւոր բանուորներ հսկայ պարիսպներ կառուցած էին կղզիին շուրջ-բոլորը, գեղեցկաշէն պալատներ բարձրացուցած, գրեթէ ամբողջ քաղաք մը շինած, անուշ ջուրի ընդյատակեայ շտեմարաններ բացած: Այդ կղզիին վրայ կեանքը շքեղօրէն ծաղկած էր օրերու՝ որոնց փառքին յիշատակը այսօր մեր սիրտերը կը ճմլէ:

Այժմ ոչինչ կայ այդ բոլորէն: Միայն, իբր լուռ վկայ, տակաւին կը բարձրանայ Սուրբ Խաչին համբուրելի կաթողիկէն, եւ իր պատերուն բարձրաքանդակներէն իրենց փորուած աչքերով տակաւին կը շարունակեն աշխարհը դիտել Ադամ-Եւան եւ Յիսուսը, Դաւիթը եւ Համագասպը, եւ թուշուներն ու կենդանիները՝ զորս հայ վարպետ քանդակագործին հանճարեղ երեւակայութիւնն է ստեղծեր: Գագիկի առանձնարան-վերնատունին մուտքը գրեթէ քանդուած է, թուշուներն են որ բոյն դրած են եկեղեցիին քիւրտուն, եւ վայրի սէզը, յաղթական ամբարտաւանութեամբ իր ճիւղերը կը հրէ պատերուն ճեղքերէն: Այո՛, «մեծ խնամքով ու գուրգուրանքով գետեղուած կրօնական քանդակները քակուեր են, սրբուեր, փճացուեր...»:

Աղթամարը վիրաւոր Հայութեան արձանն է:

Աղթամարը վերածնող Հայութեան յուսատու կրակէ սիւնն է:

Յօդուածագիր Լչըքի յայտնութիւնը՝ քսան տարի առաջ Սուրբ Խաչ Տաճարը 2,500 թրքական ոսկիի ծախու հանելու թուրք կառավարութեան որոշումին մասին, իսկական նորութիւն մըն է. ըսի արդէն գրութեանս սկիզբը, թէ թուրքեր պիտի չդադրին մեզ զարմացնելէ: Եւ իրապէս, պէտք է խոստովանիմ թէ զարմացայ այս յայտնութենէն. ո՛չ տաճար մը ծախելու իրենց ծրագրէն. ո՛չ, թուրքը ամէն ստորնութեան ատակ է, այդ շատ լաւ գիտենք: Զիս զարմացնողը՝ տաճարին տրուած գինն էր – 2,500 թրքական ոսկի: Տէ՛ր Աստուած, այդ գումարով, նոյնիսկ քսան տարի առաջուան սակերով, քանի մը ոչխար միայն կարելի էր գնել հրաշքներու այդ երկրին մէջ: Այս մարդիկը խիղճ չունին գիտենք. արուեստի կամ մշակոյթի հասկացողութենէն տիեզերքներ հեռու են շատ լաւ գիտենք. սակայն տարրական խեղճ ալ չունին. ո՞ր յիմարը այդքան աժան, անհաւատալի գինով եկեղեցի կը գնէ. ի՛նչ է, խաբուելու տրամադրութի՞ւն ունի...:

Ո՛չ, մի՞նչեւ հիմա թուրքին գէթ խելացի խորամանկութիւն կը վերագրէինք. հիմա կը տեսնեմ որ այդ իսկ շատ է: Ան իր սեփական գործն իսկ կարգի դնելու ատակ չէ:

Սակայն ահաբախիկ որ ներսէս եկող ձայն մը կ'ըսէ. «Դադրեցո՛ւր անտեղի վերագրումներդ. Թուրքը ճիշդ գործած է այս պարագային: Զէ՞ որ Սուրբ Խաչը գողութեան ապրանք է, եւ դուն կը մոռնաս թէ գողութեան ապրանքը ցած գինով կը ծախուի: Թուրքը այս պարագային եւս ճշգրտօրէն կ'արտայայտէ իր նկարագիրը»:

Իրաւունք ունի: Եւ գողութեան ապրանքին հետ մարդիկ կը վարուին երեք կերպով. նախ կը փորձեն ծախել. անյաջողութեան պարագային՝ իրենք կը ջանան ուտել կամ գործածել այդ ապրանքը. եւ ի վերջոյ՝ մնացածը կը փճացնեն: Թուրքերը մեր ապրանքը (եկեղեցիները) որքան որ կրնային կերան (այսինքն մզկիթի վերածեցին). փորձեցին ծախել՝ յաճախորդ չգտան, եւ հետեւաբար դիմեցին վերջին միջոցին՝ քանդումին: Քանդում, որուն առջեւ UNESCO-ն ոճրապարտ լուսթիւն մը միայն պահեց, հակառակ իրեն եղած բազմահարիւր բողոքներուն եւ դիմումներուն:

Սակայն մշակոյթի այդ մաքսանենդներուն պէտք է ըսենք. «Մէհմէտճիկներ, արժանաւոր ձագուկներ Լէնկիթիմուրներու, Ճէնկիզներու, Համիտներու, Թալաթներու եւ Քեմալներու, Վասպուրականի հայ Գագիկ թագաւորի եկեղեցին ծախու չէ. որո՞նք ապրանքը որո՞նք կը ծախէք: Դուք առուծախի գործէն չէք հասկնար:

Գացէք եւ յաջողութեամբ շարունակեցէք մուրացկանութեան ձեր արուեստը գործադրել...: Մէհմէտճիկներ, հայերու եկեղեցիները ծախու չեն»:

Յուլիս 27, 1979

ԱՆՅԱՅՏ ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐ

Պատահական ընթերցում մը մի քանի օր առաջ, եւ անհաստիկ որ դարձեալ հոգիս կը խռովի: Կը կարդամ 1917-ին Երուսաղէմէն գրուած նամակի մը մէջ:

«Երբ 1915-ի գարնան թորք կառավարութիւնը Հայ զինուորներու ձեռքէն զէնքերը կը խլէր եւ իբր գործաւորներ կը ծառայեցնէր քանուորական վաշտերու մէջ, անոնցմէ կարեւոր մաս մըն ալ դրկուեցաւ Սինայի անապատը՝ ճամբաներու շինութեան: Կը տեսնէինք այդ երիտասարդներու կարաւաններուն անցնիլը: Մեծ մասամբ պատառատուն զգեստներով, բոկոտն, միհար, դալկացած, հիւծած զրկանքներէ ու ճամբու յոգնութենէ: Զինուորական թորք վերակացուները զիրար կը գերազանցէին անոնց նկատմամբ վայրագ ատելալատ խստութեան մէջ: Չկար գթութիւն հիւանդներու անգամ. անոնք ծեծի տակ կը բռնադատուէին գետին պեղելու, քար եւ աւազ կրելու: Ականատեսներ միաբերան պատմեցին թէ մօտ 3,000 հոգիէ բաղկացած Հայ քանուորներու գունդէ մը 150 հոգի միայն ողջ մնացին: Հայ զինուորներէ 346 հոգի մեռան Երուսաղէմի զինուորական հիւանդանոցին մէջ: Ասոնք իրենց ընկերներուն մէջէն բախտաւորներն էին, որ գոնէ մահիճներու վրայ աւանդեցին հոգիներն եւ թաղման կարգի արժանացան, եւ այսօր իրենց գերեզմանները հողակոյտներու տխուր շարքեր կը կազմեն Սիոնի ազգային գերեզմանատան մէջ»:

Կը կարդամ քանի մը անգամ ու չեմ հաւատար. անակնկալը կը հարուածէ զիս. ըսել է այսպէս, 346 Հայ նահատակներ թաղուած են Երուսաղէմի մեր գերեզմանատան մէջ եւ ոչ ոք այսօր կը յիշէ այդ մասին: Պահ մը կը փորձեմ կասկածիլ նամակագիրին՝ Սեդրակ Տեկկանցի ճշմարտախօսութեան: Ապա կ'որոշեմ ստուգել ուրիշներէ, անձերէ՛ որոնք Մեծ Եղեռնի արհաւիրքի օրերուն Երուսաղէմ կրնային ապրած ըլլալ: Ոչ ոք կը մտաբերեմ նախ, ապա, յանկարծ, կը յիշեմ դրացի հայ մամիկը, ութսունհինգին բարեւ տուող, սակայն իր մտային սրութիւնը պահած հետաքրքիր պառաւ մը, որուն երբեմն կ'այցելեմ:

Կը վագեմ իր մօտ. ծալապատիկ նստեր ու ընթրիք կ'ընէ, կտոր մը հաց-պանիրը ուտելէ աւելի որոճալով: Մթնշաղին մէջ չի ճանչնար զիս. կը բռնեմ ձեռքը, կը սեղմեմ, քանի մը բառ կը պոռամ ականջն ի վար, ձիւնէ մագերուն մէջէն. խոնաւութենէ պղտորիլ սկսած ակնոցին ապակիներուն ետեւէն կը նշմարեմ աչքերուն փայլը: Կը ժպտի, կ'ուրախանայ — այսօր ո՞ր երիտասարդը ժամանակ ունի իրեն նման պառաւներով զբաղելու:

Անհամբերութեանս մէջ եռալով, առանց այլեւայլի կը հարցնեմ.

— Մայրիկ, մեր գերեզմանատունը հայ զինուորներ թաղուած են եղեր, ատանկ բան մը կը յիշե՞ս:

Ժպիտը կ'անհետի, թոյլ շրթունքները աւելի կը տկարանան. ճերմակ յօնքերը կը պուտէ, ծամելը կը մոռնայ, եւ պահ մը լուռ՝ նայուածքը անորոշ կէտի մը կը յառէ: Յետոյ, դողդղացող ձայնով՝

— Հա՛, կը յիշեմ, ինչպէ՞ս չէ, սեֆերպէլիքին էր : Ես ան ատեն վանքը կը մնայի: Երեք աղջիկ էինք, երբ անցնէինք՝ մեր ետեւէն «երեք կոյսերը կ'անցնին կոր» կ'ըսէին: Ամէն առտու եկեղեցի ժամերգութեան ներկայ կ'ըլլայինք, երբեմն ալ գերեզմանատուն կ'երթայինք աղօթելու: Առտու մըն ալ գերեզմանատուն որ գացինք, քա ի՞նչ տեսնեմ. մեր Հայր Տրդատը, հետն ալ երկու հոգի, լաթի մէջ բան մը շալկած ներս մտան եւ հեռուն երթալով՝ փոսի մը առջեւ կեցան: Երեքս երբ մօտեցանք, մեր Հայր Տրդատը մեզի դառնալով եւ բարկանալով՝ «հայտէ հեռացէ՛ք» ըսաւ, «ասիկա ձեզի կէօրէ բան

չէ, հայտէ՛»։ Միւս երկուքը գացին, բայց ես հետաքրքիր ըլլալուս, կամաց մը վերադարձայ եւ Ի՞նչ տեսնամ, մեղա՛յ Տէր Աստուած, գետինը, փոսին քով, լաթին վրայ, երկու երիտասարդներու մես-մերկ դիակները։ Մեր Հայր Տրդատը աղօթքը կարճ կապեց, դիակներէն մէկը բռնեցին փոսը դրին, վրան ալ միւսը իջեցուցին, արագ-արագ հողը գոցեցին, ելան գացին»։

Պահ մը լուռի ենէ ետք, ինքն է դարձեալ որ կը շարունակէ խոնաւ ձայնով․

– Յետոյ լսեցինք քի հայ գինուորներ են եղեր։ Անոնցմէ շատերը անապատ տարեր են աշխատցնելու։ Իսկ աստեղերը հիւանդացողները կառավարութիւնը հրաման ըրեր է որ հոստեղի հիւանդանոցը դնեն։ Քանի մը օր ետքը մէկը եկեր է վանք քի՝ «Հայտէ՛, եկէք ձերիններուն դիակները գատեցէք առէք»։ Մեր Հայր Տրդատը գացեր է, տեսնես՝ բլուրի չափ մես-մերկ դիակներ։ Յոյնն ալ եկեր է, Տաճիկն ալ, իրենց մեռելները կը գատեն։ Տաճիկը ինչ ըսես նորէն դիւրին կը գտնէ եղեր իրենինները․ սիւննէ՞ր եղածները կ'առնէ «Ասոնք իմ են» ըսելով։

Հապա մերինները։ Է՛հ, մեր Հայր Տրդատն ալ մնացածներուն թեւերուն, ձեռքերուն նայեր է, ով որ ճաճի նշան ունի նէ՛ առեր եկեր է, թաղելու։ Ամմա շաբաթ մը չքէց, հիւանդացաւ, դարիպ վարդապետ մը կար, իր տեղը ա՛լ անիկա կը զրկէին հիւանդանոց։

– Շատ մարդ թաղեցի՞ն, մայրիկ :

– Հէ՞՞:

– Շատ գինուոր թաղեցի՞ն, –կը բարձրացնեմ ձայնս՝ լսելի ըլլալու համար։

– Հէլալթաւ շատ էին։ Ամիսներով կը տանէին կոր թաղելու։ Հայուն դռթը՞սը կար ան տոնները․ բռնածնին կը մեռցնէին կոր անօրէնները, մեղա՛յ Տէր Աստուած։

Կը լռէ, այս անգամ բաւական երկար, ափին մէջ անզգալաբար ճզմելով հացի միջուկներ։ Յետոյ ջղայնութեամբ փշրանքները կը թօթուէ ափսէին մէջ, եւ կը սկսի փէշին քղանցքներուն հետ խաղալ հանդարտութիւնը կորսնցուցած։

– Մէկ հարցում ալ, մայրիկ, –կը խզեմ լուռութիւնը։ Կը յիշե՞ս թէ ուր կը թաղէին հայ գինուորները։

– Հա՛, ան ո՛ւր է հիմա նահատակներու յուշարձանը կայ, անոր ետեւի կողմերն էր․ անտեղերը մարդ չէր թաղուեր առաջ։


Հիմա ալ «անտեղերը» մարդ չի թաղուիր։ Կիրակի առտու կանուխ, արեւածագէն առաջ Երուսաղէմ կ'իջնեմ մեր արուարձանէն, կ'երթամ Սիոն լեռան ազգային ընդարձակ գերեզմանատունը եւ կը հասնիմ ծայրամասի այն բաժինը՝ ուր Արարայի հերոսներուն յուշարձանը կը բարձրանայ։ Իրաւ, այդ կոթողին ետեւ, դէպի ձախ, ամայի տարածութիւն մը կայ․ ամայի՛ գերեզմաններէ, ծաղիկներէ։

Արեւը հազիւ սկսած է բարձրանալ։

Թափանցիկ բան մը կայ օդին մէջ, շօշափելի խաղաղութիւն մը, հանդիստ մը․ թռչուններն իսկ չեն խանդարեր։ Կը քալեմ ամայի այդ հողին վրայէն վախով, քայլերս կարելիին չափ թեթեւ դնելու ճիգով։

Ոչինչ կայ տարօրինակ այդ հողին վրայ, ոչ մէկ նիւթական փաստ՝ թէ հոն, քանի մը թգաչափ խորունկ փոսերու մէջ կը պառկին 346 գինուորներ, հայ գինուորներ, դժբախտ՝ իրենց նահատակութեան մէջ, կրկնապատիկ դժբախտ՝ յաւիտենական իրենց քունին մէջ։

Ուրեմն այսպէ՛ս, ամէն Ապրիլ 24-ի երբ երկար թափօրով Արարայի կոթողին առջեւն ու շուրջը կը բոլորուինք, անոնք հոն՝ մեր ոտքերուն տակ կը պառկին, մեզի անծանօթ, մեր կօշիկներուն տակ իրենց նահատակութեան յիշատակին ոչնչացումը տեսնելով։



Ճակատագիրը ինչ տարօրինակ խաղեր ունի երբեմն:

Ինչպէ՞ս մոռցուած է անոնց գոյութիւնը. երեք հարիւրէ աւելի հայ գինուորներու մահուան իրականութիւնը ինչո՞ւ եւ ինչպէ՞ս ջնջուած է Երուսաղէմ ապրողներու յիշողութենէն: Հաւաքական անգիտակից հակազդեցութի՞ն մը արդեօք պատահածին ահաւորութեան առջեւ՝ մոռնալու ե՛լ դիակները, ե՛լ անոնցմով խորհրդանշուող Աղէտը:

Եւ կամ՝ պարզ այլ դատապարտելի անհոգութի՞ն, անտարբերութի՞ն:

Կը ծռիմ հողին, ձեռքերովս կը փորեմ քանի մը վայրկեան՝ հապճեպով բայց զգուշութեամբ: Գիտեմ որ փոսերը խորունկ չեն բացած, եւ թերեւս հոն պառկողներուն ոսկորները շատ մօտ են հողի մակերեսին:

Ոչինչ կը գտնեմ: Ուրիշ տեղէ մը կը սկսիմ նոյնը, դարձեալ անարդիւնք: Եւ կանգ կ'առնեմ: Ի՞նչ օգուտ ածիւններու այս փնտռտուքը, եւ ի՞նչ բանի համար: Անոնք հո՞ն են, գիտեմ, եւ լաւ է որ ձգուին իրենց քունին մէջ: Առանձին էին, առանձին թող մնան:

Եւ մինչեւ այսօր տակաւին անոնք կը մնան անյիշատակ եւ Մեռելոցի Երկուշաբթի մը կամ Ապրիլ 24-ի օրով վարդապետ մը տակաւին չերթար այդ համայնական շիրիմին վրայ ափ մը խունկ ծխելու եւ «Հոգւոց» մը կարդալու:

Նահատակութեան մէջ դժբախտ, մահուան մէջ դժբախտ:

1977-1981

«ԹԷՈՂԻԿԻՆ ԲԱՐԵՒ ԸՐԷ...»

Ալեհեր անձ մըն է գրասենեակէն ներս մտնողը. երկչոտ, բարի ժպտով, դրան մէջ կանգ կ'առնէ: Իրեն կը նայիմ, կը խնդրեմ որ յառաջանայ, սակայն հոն անշարժ կը կենայ: Ի վերջոյ, ձայնով մը որ անհամբերութիւնս կը մատնէ, կ'ըսեմ.

– Հայրիկ, ի՞նչ կ'ուզես:

Կը յառաջանայ, եւ պահ մը տատամսելէ ետք կը յարէ.

– Դուն Թէոդիկը կը ճանչնա՞մ:

Անակնկալ հարցումէն նախ կը ժպտիմ, ապա ծերունին կը նստեցնեմ թիկնաթուին եւ կը պատասխանեմ.

– Ո՛չ, չեմ ճանչնար, բայց իր մասին բաւական բան գիտեմ: Ան տարիներ առաջ մեռած է դժբախտաբար:

– Գիտե՞ս թէ ո՛ւր ծնած է:

– Կարծեմ Պոլիս:

– Չէ՛, ատ մարդը պոլսեցի չէ:

– Հապա՞մ:

– Արաբկիրի Անջրդի գիւղէն:

– Ո՛չ, հայրիկ, որքան գիտեմ՝ Թէոդիկ այդ կողմերը նոյնիսկ գտնուած չէ:

– Ինչպէ՞ս կ'ըլլայ, պարո՛ն, անպայման Անջրդիէն է, մեր գիւղէն, որովհետեւ շատ լաւ նկարագրած է:

– Բայց միւս գիւղերն ու քաղաքներն ալ նոյնքան ճշգրտութեամբ եւ մանրամասնօրէն նկարագրած է:

– Կրնայ ըլլալ, բայց Անջրդիի համար կը գրէ. «Գիւղիս սահմաններուն մէջ են...»: Կը տեսնե՞ս, «գիւղիս» կ'ըսէ, իր ծնած գիւղը:

Ա՛լ կը լռեմ ու գինք կը դիտեմ հետաքրքրութեամբ: Ու խանդաղատանքով: Յոգնած աչքերուն չիւնայելով, այս ծերունին ուշադրութեամբ հետեւեր է Թէոդիկի «Գողգոթա»-ին, գտեր է իր գիւղը, ուրախացեր, ապահովաբար նաեւ տխրեր, եւ հիմա եկած, բնագրական մղումով մը, Թէոդիկը կը ջանայ «իւրացնել»: «Գիւղիս»-ին մասին բացատրութիւններ տալ աւելորդ ե՛լ անտեղի կը նկատեմ, մինչ ինք, լռութենէս քաջալերուած, կ'ըսէ.

– Պարո՛ն, եթէ Թէոդիկը տեսնելու ըլլաս, բարեւ ըրէ իմ կողմէս եւ հարցուր թէ որո՞նց տունէն է ինք. ես անանկ անունով մէկը չեմ յիշեր...

Եւ գոհ ու հանգստացած, ոտքի կ'ելլէ եւ կը մեկնի:

«ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍԻ ՆԷ՝ ԽՆԴԱԼԷՆ ԿԸ ՃԱԹԻՔ...»

Ուրախ պարահանդէս մըն էր. այնպիսիներէն՝ երբ, եթէ ներկաները պարելով — ցատկուտելով — զբաղած չըլլան՝ շատ-շատ սեղաններուն վրայէն հետզհետէ անհետանալ սկսող ուտելիքներուն վրայ կը կեդրոնացնեն իրենց ուշադրութիւնը, եւ կամ, առաւելագոյն պարագային՝ թեթեւ խօսակցութեան մը հաճելի բայց անխուսափելի տաղտուկին կը յանձնուին:

Այդպիսի խօսակցութիւն մըն էր մերը, կլոր սեղանի մը շուրջը հաւաքուածներու համար, եւ նուազախումբին գոռում-գոչումներուն մէջ գրեթէ ակամայ կը շարունակէինք բառերը պոռալ իրարու երեսին:

Խօսակիցս կը պատմէր իր ընտանիքին մասին. մօտ տասը տարի առաջ Ամերիկա եկած էր կնոջը եւ երկու մանչուկներուն հետ. ինք եւ կինը Միջին Արեւելքի մէջ իրենց մանկութենէն հայկական լաւ եւ հիմնաւոր դաստիարակութիւն ստացած էին: Ամերիկայի մէջ բազմաթիւ դժուարութիւններ հաստատամտութեամբ հարթած էին, պայքարած, նեղ օրեր ապրած, եւ հիմա ալ նիւթական շատ ապահով վիճակ մը ունէին: Երջանիկ էին:

Իսկ գաւակները:

— Ալ հանգիստ ենք. մանչերս մեծցան, արդէն զիրենք շատ քիչ կը տեսնեմ. միշտ բան մը ունին ընելիք, տեղ մը երթալիք, հաւաքոյթ մը կամ ձեռնարկ մը իրենց ընկերներուն հետ:

Երջանիկ ժպիտ մը ունի խօսակիցս, գոհ եւ իր պարտականութիւնները կատարած մարդու հանգստութիւն մը, որ կը շարունակուի՝ երբ քովէս մէկը կը հարցնէ.

— Մանչերդ հայերէն կը խօսի՞ն:

— Մեծը քիչ մը կը խօսի. գիտէք, Ամերիկա չեկած սորված էր:

Յետոյ լայն ժպիտ մը կը գծուի դէմքին վրայ եւ կ'աւելցնէ լեցուն խնդուքով մը.

— Բայց պզտիկը տեսնելու էք. հայերէն խօսի նէ՛ խնդալէն կը ճաթիք...

Չենք խնդար, եւ իր ալ խնդուքը շուտով կը մարի աղմուկին մէջ: Խօսակցութիւնը կանգ կ'առնէ, մեզմէ ոչ ոք սիրտ ունի բառ մը փոխանակելու:

Ուրեմն որքա՛ն դիւրին է դէպի օտարացում սահիլը. որքան կարճ արմատ ունի մեր լեզուն այս Հայուն հոգիէն ներս, անոր՝ որ նուազագոյն տաս տարի հայ դպրոց է գացեր, հայկական շրջանակի մէջ է ապրեր եւ որ սակայն չի գիտակցիր իր հայութեան, իր պատկանելիութեան:

Մարդ մըն է, աշխարհաքաղաքացի մը, վաղուան «Հայ»ը: Ոչինչ կը կապէ զինք իր ժողովուրդին:

Անցեալ չունի. ներկայ չունի: Իր ապագան՝ մե՛ր ապագան է:

Եւ այդ վաղուան վճիռն է որ հիմա կը հնչէ ականջիս. «Հայերէն խօսի նէ՛ խնդալէն կը ճաթիք...»:

«ԽԵՆԷՔԻ ԳՈՐԾԱԾԷ...»

Մինչեւ հիմա տարօրինակ նորութիւնները Ամերիկայի Միացեալ Նահանգներէն կ'արտածուէին:

Կ'երեւի թէ ուրիշ երկիրներ նախանձիլ սկսած են այս ոչ-նախանձելի առաջ-նութեան:

Վերջին լուրը կուգայ Վենեզուելայէն, ուր կառավարութիւնը հաստատեր է իր տեսակին մէջ եզակի, նոր նախարարութիւն մը՝ որ կը կոչուի «Մարդկային իմացականութեան Զարգացման Նախարարութիւն»:

Ի՞նչ է այս նոր նախարարութեան դաշտը. Նախարարը՝ Լուիս Ալպերթօ Մաչատօ, հետեւեալ բացատրութիւնը կուտայ. «Մոսկուայի եւ Հարվըրտի համալսարաններուն մէջ ուսուցող թուագիտութիւնը (mathematics) նոյնն է ինչ որ կը դասաւանդուի հոս Գարագասի կամ Պոկոթայի մէջ: Եւ, բոլոր ուսանողներու կարողականութիւնը միեւնոյնն է աշխարհի վրայ: Հետեւաբար, ինչո՞ւ արդիւնքը տարբեր է. ինչո՞ւ Նոպէլի մրցանակակիրները միայն անոնց համալսարաններէն կուգան, եւ ոչ թէ մերիներէն»:

Ուրեմն նախարարը, որպէս առաջին քայլ այս «անհասարակութիւն»ը փոփոխելու՝ հաստատած է մասնաւոր դասընթացք-ծրագիր մը գոր կոչած է «Մտածել սորվիլ»: Այսինքն, նախարարութեան նպատակն է մեծ թէ պզտիկ ուսանողներուն «սորվեցնել» դպրոցներուն մէջ իւրացուած գիտութիւնը գործնականացնելու վարժութիւնը, այնքան որ այդ վարժութիւնը սովորութեան վերածուի եւ մտնէ սերունդներու նկարագրէն ներս: Ինչպէս կը տեսնուի, երեւցածին չափ տարօրինակ չէ ըսուածը:

Մեր հայերը երկու բառով ամփոփած էին այս ծրագրին ետին կեցող իմաստութիւնը. «Խե՛լքդ գործածէ»: Գործնական մարդիկ ըլլալով, մեր նախահայրերը շատ պարզ հաւասարութիւն մը կը գործածէին.

Գիտութիւն + ողջմտութիւն + կամք = գործ + յաջողութիւն:

Վերի հաւասարութիւնը կազմող երեք տարրերուն ամենէն կարեւորը, ըստ իս, երկրորդն է. ողջմտութիւնը (common sense): Գիտութիւնը կը ստացուի դպրոցէն եւ յաճախ մեքենական ճիգ կ'ենթադրէ. մարդիկ ընդհանրապէս կամք ունին: Ողջմտութիւնն է որ յաճախ կը բացակայի. ան չստացուիր, ոչ ալ կարելի է սորվիլ կամ ամէն ինչ լուծող փորձառութեան ապաւինիլ: Ողջմտութիւնը ճիշդին եւ սխալին միջեւ զանազանութիւն դնելու ներծին կարողութիւնն է, տեսակ մը հոտառութիւն, որ սակայն խորամանկութեան հետ կապ չունի:

Ատոր համար է որ մեր հայերը «Խե՛լքդ գործածէ» կ'ըսէին, «խելք»ին մէջ ողջմտութիւնը հասկնալով եւ ոչ թէ գիտութիւնը, որմէ շատ քիչ ունէին իրենց ծննդավայր գիւղերուն մէջ:

Ժողովրդական այդ իմաստութիւնն է որ այսօր կը փնտռենք հայ կեանքին մէջ:

Գիտութիւն, բոլորս ունինք, կամք՝ անշուշտ, բայց բացակայողը ողջմտութիւնն է: Ի՞նչ կ'ընէ հայ երիտասարդը — ի՞նչ կ'ուզէ կեանքէն՝ որուն բոլոր պատեհութիւնները բաց են իր առջեւ: Ան մեր նախահայրերուն գործնականութիւնը միայն ժառանգած է, եւ հետեւաբար կը միտի կեանքի նիւթական բարիքներու տիրացումին միայն, հետզհետէ մոռնալով ոգեկանը:

Ուսումը դարձած է միջոց միայն՝ ասպարէզի մը տիրանալու, ապրուստը ճարելու, ընտանիք կազմելու եւ ... ապրելու: Այսքան միայն: Քանիներն են այսօր որ գործնական գիտութիւններէ դուրս՝ ազատ արուեստներու (Humanities) կը հետեւին: Եւ, գիտութիւններու մէջ մասնագիտացողներէն քանի՞ հոգի այդ ամբարուած ծանօթու-

Թիւնները կը գործածէ իբրեւ խարխախ՝ պրպտումներու եւ հետազօտութիւններու նուիրուելու:

Բոլորիս մօտ դարձեալ պիտի հնչէ՞ հիներուն պատուէրը. «Խեղք գործածէ...»:

Փետրուար 25, 1981

ԱՐԴԱՐ ՁԱՅՐՈՅԹ

Բաւական զով կէսօր մըն էր, թեթեւ հովով մը:

Ելած էի խմբագրատան դրան առջեւ, քանի մը վայրկեան հանգստանալու: Փողոցը ընդհանրապէս հանդարտութիւն մը կ'ունենայ այդ ժամերուն, երբ անցնող ինքնաշարժները հաճոյքով կարելի է դիտել: Իսկ մայթերէն անցորդներ՝ գրեթէ չեն պատահիր:

Տեսայ գինք՝ երբ տակաւին հեռու էր. բարձրահասակ անձ մը ըլլալու էր, եւ գաւազանի մը յենելով կը քայլէր: Սպասեցի իրեն, դէմքս հակառակ ուղղութեամբ դարձուցած, անհոգ երեւոյթով:

Մօտեցաւ. ճերմակ թեթեւ ժագէթ մը հագած էր՝ սրճագոյն տափատ եւ ...ճերմակ կօշիկներ: Այդ ճաշակով միայն արաբ-քրիստոնեայ մեծահարուստները կը հագուէին մեր երկիրը: Այս մարդը, գէթ հագուստին կողմէ, կէս դար ետ էր մնացեր:

Աւելի մօտեցաւ. հսկայ քիթ մը կը տիրապետէր դէմքին՝ որ հիւանդկախ տժգուհութիւն մը ունէր: Զիս անցաւ դժուար փոխելով քայլերը, ապա կանգ առաւ, ետին դարձաւ եւ անուշ ձայնով մը ըսաւ.

— Հայրենակից, կարծեմ դուն հայ ես:

Տարօրինակ կերպով անակնկալի չեկայ. ընդհակառակը՝ կարծեմ կը սպասէի այդ հաստատումին: Ժպտեցայ եւ գլուխովս հաստատական նշան ըրի:

— Հայերէն կը խօսի՞ս:

— Այո՛:

— Պրէ պապամ, ատանկ ըսէ որ հանգստանամ —յանկարծ գոչեց բարկութեամբ: Գիտե՞ս որքան դժուար է հայերէն խօսիլ ուզող հայ գտնել այստեղ:

— Դուք ուրկէ՞ էք:

— Պէյրուէէն եմ, քանի մը տարի է որ հոս եմ: Կը ձանձրանամ: Ակումբ կ'երթամ՝ անգլերէն, եկեղեցի՝ անգլերէն, հիմա ալ տունը սկսեր են պզտիկները: Սա գաւազանս կը տեսնե՞ս, տկար եմ, չեմ կրնար քայլել: Երէկ հիւանդանոցէն փախայ:

— Հրամայեցէ՞ք:

— Այո՛, փախայ: Ինծի գործողութեան համար տարեր էին. տղաքս պնդեցին, եթէ ոչ չէի երթար: Ինչ որ է: Գործողութիւնը եղանք, պառկեր եմ կը հանգստանամ, աչքս բացի որ քովս նոր հիւանդ մը կը բերեն. հետը հայերէն կը խօսէին: Ինչ որ է: Բաւական վերջ իրեն հարցուցի թէ հայ է: "Yes" պատասխանեց: «Հայերէն գիտե՞ս»: — "Yes":

— «Պրէ պապամ, ինչո՞ւ հայերէն չես պատասխաներ, հայերէն կ'ուզե՞ս խօսիլ»: — "No": Ա՛լ կատղեցայ: Հակառակ որ գործողութեանս տեղը կը ցաւէր, մէկ կողմիս վրայ իր կողմ դարձայ եւ պոռացի երեսին. «Ծօ՛ մարդ, ես հինգ լեզու գիտեմ, թէ՛ կը խօսիմ, հէմ ալ կը կարգամ, բայց հայերէն կը խօսիմ հայերուն հետ: Այս ի՞նչ մարդկութիւն է ըրածդ, այս ի՞նչ ազգասիրութիւն է, այս ի՞նչ հայրենասիրութիւն է:

Դուն մեր Սուրբ Մեսրոպին մասին չե՞ս լսած, հէ՞, Վարդանը չե՞ս գիտեր, մեր Խրիմեան Հայրիկին մասին չե՞ս կարդացած: Ծօ այդ մարդիկը պարապ տե՞ղ աշխատեցան մեզի համար, հէ՞...»:

Չպատասխանեց: Ելայ, հագուստներս ուզեցի, կռուեցայ, առի, հագայ եւ առանց այդ միւսին կողմը նայելու հիւանդանոցէն ելայ: Taxi մը առի եւ տղուս տունը գացի: Դուն ինչ կ'ըսես նայինք ասոր, հէ՞: Աս մեր ազգին վերջը ո՞ւր պիտի երթայ:

Եւ պատասխանի չսպասեց. առանց հրաժեշտ առնելու գնաց:

Քանի մը ամիս վերջ մահազգը բերին թերթին:

ՊԱՐՈՆԵԱՆԻՆ ԱՆԱՐԺԱՆ «ՉՈՉՔԱՐԵՐԱՐ» ՄԸ

Տեղեկատուութիւն մը կայ սեղանիս վրայ հայ անունով մարդու մը մասին:

Տիպար բարերարն է ան. Փարիզի նման սուղ քաղաքի մը մէջ - եւ այն ալ՝ քաղաքին կեդրոնը - մշակոյթի շէնք մը կը բարձրացնէ եւ կը նուիրէ: Իրենց հայրենիքէն հեռու, օտարութեան մէջ պատառ մը հացի համար տուայտող պանդուխտ-ղարիպներուն համար ազգասիրաբար աղօթքի տուն կը կառուցանէ եւ կը նուիրէ: Եւ թերեւս որքան այլ բարերարութիւններ բխած են սրտէն, զորս համեստաբար չի յիշեր: Համաձայն շրջան մը առաջ հայ թերթերուն կողմէ շատ գործածական արտայայտութեան, «պատմութիւնը անշուշտ ոսկի տառերով պիտի արձանագրէ» անոր անունը իր մատեանին մէջ:

Մէկ տարբերութեամբ միայն:

Այդ պատմութիւնը թուրքին պատմութիւնը պիտի ըլլայ, որովհետեւ նուիրուած մշակոյթի շէնքը թուրքերուն համար է. որովհետեւ աղօթատեղին թուրք զարիպներուն համար է:

Իսկ ո՞վ են առեւտրականները որոնց կը նուիրուի մշակոյթի շէնքը. ո՞վ են այդ զարիպները որոնց համար մզկիթ կը հայթայթուի - Թուրքիոյ քաղաքացիներ. երկրի մը՝ որ բոլոր կարելիութիւնները ունի պետականօրէ՛ն հոգ տանելու անոնց մշակութային թէ կրօնական պէտքերուն:

Իսկ ո՞վ են անոնք՝ որոնց արիւնը իբր թէ կը հոսի նաեւ այս «բարերար»ին երակներուն մէջէն. ո՞վ են անոնք՝ որոնք «հաւատացեալ» այդ Թուրքերուն կողմէ վտարուած իրենց հայրենիքէն՝ վեց տասնամեակէ աւելի է կը թափառին աշխարհի բոլոր կողմերը եւ պէտք ունին եկեղեցիի, եւ դպրոցի, եւ ակումբի, եւ մշակութային կեդրոնի...:

Այո՛, հասկնալի է, որպէս նախկին թրքահայ մեծահարուստ՝ այդ հայանուն անձը կրնայ առեւտրական հաշիւներ, շահեր կամ մտահոգութիւններ ունենալ. ե՛ւ ուրեմն՝ նուիրատուութիւններ կատարել - կատուին սպառնական թաթին առջեւ՝ մուկին ստորնաքարչութիւնը պարզապէս: Հասկնալի է: Բայց ասիկա՝ «կայսր»ին բաժինն է. իսկ ո՞ր է բո՛ւն տիրոջ՝ «Աստուծոյն» բաժինը, ո՞ր է Հայութեան համար շինուած եկեղեցին, Հայութեան «ղարիպ»ներուն հաւաքավայրը...:

Հայը մուրացկան չէ եղած եւ չէ: Այս տողերը չեն գրուիր ողորմութեան մը յոյսով. հացկատակութիւնն ու պնակալիզութիւնը մեր նկարագրին մաս չեն կազմեր: Կը գրենք ցոյց տալու համար ապագայնացած հայու տիպարը, ան՝ որուն աւելի յաճախադէպօրէն սկսած ենք հանդիպիլ վերջերս:

Այդ տիպարին տեղը հո՛ն, «Թիւրք էլի»ին մէջ է, եւ ոչ թէ համեստ եւ անշուք՝ այլ սրբասուրբ «Հայ Տուն»ին:

Յակոբ Պարոնեան, իր «Ազգային ջոջեր»ուն մէջ անցեալ դարու Հայ մեծահարուստ մը կը նկարագրէ երեք տողով միայն. «Կարապետ պէյ Երսմեան ծնած է 1830-ին: Կազմով բարեձեւ, սեւ աչքերով եւ սեւ ընքուիներով մարդ մ'է: Մզկիթ մը շինել տուած է»:

Այդ խեղճ մարդը գոնէ չքմեղանքը ունէր իր կատարածին - կ'ուզէր լսել իր սեփական երգիչին ձայնը, նոյնիսկ եթէ ատիկա գար մզկիթին կատարէն:

Մինչ Փարիզի հայանունին այդ իսկ կը պակսի:

«ԻՆՏԻ ՉԻ՝ ԿԻՆԱՐ ՊԱՏԱՀԻԼ...»

Կարծեմ բոլորս ալ նոյն բանը կը մտածենք միեւնոյն նիւթին շուրջ:

Երբ մեր տուներու մեղկ ապահովութեան ապաստանած, հաճելի ընթրիքէ մը ետք կ'ընկողմանինք մեր թիկնաթոռներուն մէջ եւ կանոնաւոր մարսողութեան համար հեռատեսիլը կը բանանք տեղական լուրերը մտիկ ընելու, բոլորովին կը կտրուինք դուրսի աշխարհէն, անհոգ ենք եւ երջանիկ:

Եւ երբ —անխուսափելի կանոնաւորութեամբ— լուրերը կը սկսին հրդեհներու, կողոպուտներու, արկածներու եւ ոճիրներու նկարագրականներով, երբ ձերբակալուած կասկածելիներ «ամօթխածութեամբ» իրենց դէմքը ծածկած, ոստիկաններու կողմէ դէպի ինքնաշարժներ կը հրուին, երբ հրդեհի բոցեր քանի մը վայրկեանի մէջ մոխիրի կը վերածեն տուներ՝ որոնք ընտանիքներու ամբողջ աշխարհը կը կազմէին տակաւին քիչ առաջ, եւ երբ պատանքներով փաթթուած սպանեալներու դիակներ կը փոխադրուին պատգարակներով, —մենք ինքնագոհ անտարբերութեամբ մը աւելի կը թաղուինք թիկնաթոռներուն մէջ եւ գոհունակութեամբ կը հաստատենք.

— Ինծի չի՛ կրնար պատահիլ...

Հեռաւոր քաղաք մը բնակող բարեկամս անցեալ օր կը պատմէր հեռաձայնէն.

— Երէկ գիշեր, ուշ ատեն, տունէն դուրս ելայ, մեր շէնքին ետեւը գտնուող փողոցը, աղբամանը պարպելու: Հողաթափներով էի: Փողոցը ամայի էր, եւ շատ խաղաղ: Սկսայ յառաջանալ —հողաթափներով էի— դէպի անկիւնի մեծ աղբամանը: Նշմարեցի որ ինքնաշարժ մը փողոցին անկիւնը դառնալով՝ դանդաղօրէն դէպի իմ կողմս կուգար: Մտածեցի թէ տուն մը կը փնտռէին: Կանգ առի՝ ի հարկին օգնելու: Հազիւ ինծի մօտեցած՝ ինքնաշարժը յանկարծ կեցաւ, երկու երիտասարդներ դուրս ցատկեցին եւ երկվայրկեանի մը մէջ երկու դաշոյններ կոկորդիս վրայ զգացի: Քսակս կ'ուզէին: Հողաթափներով էի: Աչքիս պոչով նայեցայ՝ փողոցին մէջ մեզմէ զատ ոչ ոք կար: Հիմա ինքզինքս կը շնորհաւորեմ որ «հերոսութիւն» ընելու մտածումը չունեցայ...: Գրպանէս քաշեցի քսակս, զոր խլեցին եւ ինքնաշարժ նետուելով անհետացան: Այս բոլորը կէս վայրկեան հազիւ տեւեցին, սակայն կարծես ժամ մըն էր որ հոն կանգնած էի: Ի վերջոյ սթափեցայ. ցնցուած էի եւ հողաթափով: Յարկաբաժինս ելայ եւ ոստիկանութեան հեռաձայնեցի, որովհետեւ քսակիս հետ աւազակները տարած էին պաշտօնական եւ կարեւոր բոլոր «քարթ»երս: Մինչեւ ոստիկաններուն գալը քիչ մը ինքզինքս գտայ եւ անդրադարձայ անցուցած վտանգիս: Կրնային պարզապէս զիս սպաննած ըլլալ...: Երեւակայէ, հսկայ այս քաղաքին մէջ մարդ չգտնեն եւ զիս կողոպտեն, ինծի պատահի...: Անհաւատալի բան է: Հեռատեսիլէն կը դիտէի, թերթերէն կը կարդայի, բայց այդ բոլորը ուրիշներո՛ւն կը պատահէր, կարծես ես մաս չէի կազմեր մարդկութեան այդ ալիքին: Եւ հիմա տես թէ ինչ կը պատահի ինծի...: Ա՛լ ինչպէ՞ս ընտանիքիս հետ դուրս պիտի ելլեմ գիշերները, ա՛լ ինչպէ՞ս ապահով պիտի զգամ ինքզինքս իմ տանս մէջ իսկ...:

Եւ այսպէս, բոլորս ալ —մենք որ համոզուած էինք թէ գերծ պիտի մնայինք «պատահած»ներէն վերին տնօրինութեամբ մը—, մեր խաղաղութեան եւ անդորրութեան

մէջ ցնցուած՝ հետզհետէ պիտի քաշուինք մեր պատեաններուն մէջ, կասկածը պիտի կրծէ մեզ, անվստահութիւնը մեզ պիտի առաջնորդէ եւ, համատարած վտանգին առջեւ սարսափահար, ա՛լ պիտի չկարենանք յոխորտալ.

– Ինծի չի՛ կրնար պատահիլ...

Մարտ 6, 1981